



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2008թ. երրորդ եռամսյակում /վերլուծություն/

2008թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 41210 գործարքներ, որոնց քանակը 2008թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել է 0.7%-ով, իսկ 2007թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 0.03%-ով:

2008թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 14381 օտարման գործարքների 79.7% կազմել են առուվաճառքները, 19.3%՝ նվիրատվությունները և 1.0%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 32.5% արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված

անշարժ գույքի 32.8% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2008թ. երրորդ եռամսյակում, 2008թ. երկրորդ եռամսյակի համեմատ անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 0.9%-ով, իսկ 2007թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 10.1%-ով:

2008թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 62.9% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2008թ. երկրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 1.7%-ով, իսկ 2007թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 22.5%-ով:

2008թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	երրորդ եռամսյակ 2007թ.	երրորդ եռամսյակ 2008թ.	երկրորդ եռամսյակ 2008թ.
Կենտրոն	455100	488300	478600
Արաբկիր	376800	412700	414900
Քանաքեռ-Զեյթուն	280300	310300	307900
Նոր-Նորք	235700	278500	276100
Ավան	230300	273200	270100
Էրեբունի	236500	277100	273500
Շենգավիթ	252100	285300	279500
Դավթաշեն	259100	301800	289500
Աջափնյակ	245800	278800	280400
Մալաթիա-Սեբաստիա	232200	265500	265300
Նուբարաշեն	126700	157700	152800
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	266400	302700	299000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. երրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել են 1.2%-ով:

2008թ. երրորդ եռամսյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1182 բնակարաններ, որոնց քանակը 2008թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել է 11.9%-ով, իսկ 2007թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 27.8%-ով:

2008թ. երրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/
--------	----------	-----------------------

		Երրորդ եռամսյակ 2007թ.	Երրորդ եռամսյակ 2008թ.	Երկրորդ եռամսյակ 2008թ.
Արագածոտն	Աշտարակ	110100	139900	127200
	Ապարան	28700	35100	33300
	Թալին	38100	44800	42900
Արարատ	Արտաշատ	88000	106000	95800
	Մասիս	100300	132400	128700
	Վեդի	62700	82500	79400
	Արարատ	57700	64500	59700
Արմավիր	Վաղարշապատ	130700	171300	164800
	Արմավիր	97200	126400	117300
	Մեծամոր	62200	85400	78700
Գեղարքունիք	Սևան	65600	100400	89600
	Գավառ	36100	49800	45900
	Մարտունի	53600	68900	68400
	Վարդենիս	26300	32800	31200
	Ճամբարակ	15100	16400	16000
Լոռի	Վանաձոր	75300	100300	90000
	Ստեփանավան	39300	47900	45800
	Սյիտակ	46700	62600	61200
	Ալավերդի	26400	32400	30200
	Տաշիր	26200	32600	30900
	Թումանյան	5400	5600	5600
	Շամլուղ	3000	3200	3200
	Ախթալա	11700	13000	12800
Կոտայք	Աբովյան	150000	176700	173300
	Նոր Հաճն	105900	132300	123100
	Բյուրեղավան	76400	110600	100100
	Եղվարդ	94500	124000	116800
	Հրազդան	53800	71400	67500
	Ծաղկաձոր	100900	161900	145200
	Չարենցավան	64900	94900	90500
Շիրակ	Գյումրի	74000	109300	96100
	Արթիկ	47000	57100	54100
	Մարալիկ	25700	27600	26600
Սյունիք	Գորիս	75100	112100	104700
	Կապան	69900	95200	86700
	Սիսիան	54300	78700	71100
	Մեղրի	39600	47800	45900
	Ազարակ	25300	29400	29000
	Քաջարան	34400	52000	47500
	Դաստակերտ	6900	7000	7000
Վայոց Ձոր	Վայք	62900	78100	74800
	Եղեգնաձոր	79000	100500	96100
	Ջերմուկ	111700	130700	123900
Տավուշ	Դիլիջան	71100	101700	89300
	Իջևան	93500	131000	117100
	Բերդ	34200	40000	38500
	Նոյեմբերյան	28500	30500	29900
	Այրում	20800	21100	21100

2008թ. երրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի

հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել են 7.0%-ով:

2008թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 1390 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 320, մյուս մարզերում միասին վերցրած՝ 1070: 2008թ. երկրորդ եռամսյակի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 12.2%-ով, ընդ որում, Երևանում՝ 10.1%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 12.9%-ով: 2007թ. երրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 20.1%-ով, ընդ որում Երևանում՝ 31.3%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 16.0%-ով:

2008թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	երրորդ եռամսյակ 2007թ.	երրորդ եռամսյակ 2008թ.	երկրորդ եռամսյակ 2008թ.
Կենտրոն	471400	504300	491600
Արաբկիր	387700	436200	420800
Քանաքեռ-Զեյթուն	284400	320900	314700
Նորք-Մարաշ	239000	299100	283600
Ավան	235100	285100	274500
Էրեբունի	239900	287100	275600
Շենգավիթ	256600	291000	281700
Դավթաշեն	263300	315600	295800
Աջափնյակ	250300	295300	285900
Մալաթիա-Սեբաստիա	235900	284700	273400
Նուբարաշեն	129900	162400	158400
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	272100	316500	305100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. երրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել են 3.7 %-ով:

2008թ. երրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		երրորդ եռամսյակ 2007թ.	երրորդ եռամսյակ 2008թ.	երկրորդ եռամսյակ 2008թ.

Արագածոտն	Աշտարակ	113500	144100	129800
	Ապարան	33300	38200	36000
	Թալին	41100	48200	45800
Արարատ	Արտաշատ	91600	108300	100700
	Մասիս	102800	138900	131400
	Վեդի	65200	91300	87800
	Արարատ	62100	67000	65300
Արմավիր	Վաղարշապատ	134600	176400	168600
	Արմավիր	99000	128800	122100
Գեղարքունի ք	Մևան	67700	102500	91700
	Գավառ	39700	52000	47700
	Մարտունի	56000	76700	71900
	Վարդենիս	30500	35700	33200
	Ճամբարակ	18400	20900	20000
Լոռի	Վանաձոր	79600	104500	93900
	Ստեփանավան	41600	52800	51400
	Սյուխակ	50100	67000	66000
	Ալավերդի	29900	35900	32300
	Տաշիր	28600	36400	34400
	Թումանյան	8500	10200	9800
	Շամլուղ	5700	7200	6500
	Ախթալա	14900	16000	15800
Կոտայք	Արովյան	154800	190000	178800
	Նոր Հաճն	110600	138900	127300
	Բյուրեղավան	79000	114600	101900
	Եղվարդ	97600	130500	119600
	Հրազդան	56900	76600	69300
	Ծաղկաձոր	144700	253100	227700
	Չարենցավան	67600	99300	92100
Շիրակ	Գյումրի	78600	111100	98800
	Արթիկ	49400	60700	57700
	Մարալիկ	28700	32200	31000
Սյունիք	Գորիս	78900	119500	107000
	Կապան	72600	97700	90900
	Սիսիան	57200	80900	72900
	Մեղրի	41800	50300	49300
	Ագարակ	27200	32800	32100
	Դաստակերտ	9700	10400	10300
Վայոց Ձոր	Վայք	64600	81400	78600
	Եղեգնաձոր	81800	104100	100900
	Ջերմուկ	58300	91200	78700
Տավուշ	Դիլիջան	74100	109600	94500
	Իջևան	96400	132900	123700
	Բերդ	37200	41400	40500
	Նոյեմբերյան	32100	35900	35300
	Այրում	22000	22900	22800

2008թ. երրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել են 7.8%-ով:

Ընդհանուր առմամբ, 2008թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել են 5991 միավոր /5461.33 հա/ հողեր, որից Երևանում՝ 313 միավոր /45.00 հա/,

այդ թվում 22 հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 113 միավոր /30.16 հա/ հողեր, որից Երևանում՝ 48 միավոր /14.06 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2348 միավոր /5067.69 հա/, որից Երևանում՝ 15 միավոր /2.27 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 2402 միավոր /212.07 հա/, որից Երևանում՝ 203 միավոր /15.80 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 1117 միավոր /85.24 հա/, որից Երևանում՝ 89 միավոր /25.11 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 67 միավոր /38.81 հա/, որից Երևանում՝ 6 միավոր /1.33 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 52 միավոր /56.98 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 5 միավոր /0.55 հա/:

2008թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում օտարված հողերից 5438 միավորի /5285.84 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 259 միավոր /37.79 հա/, նվիրատվության գործարքներ՝ 503 միավոր /160.24 հա/, որից Երևանում՝ 41 միավոր /3.92 հա/ և փոխանակության գործարքներ՝ 50 միավոր /15.25 հա/, որից Երևանում՝ 13 միավոր /3.30 հա/:

Հանրապետությունում 2008թ. երրորդ եռամսյակում, 2007թ. երրորդ եռամսյակի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 6.7%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 6.0%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել՝ 7.3%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել՝ 1.5%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 2712.81 հա, որից 2681.32 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

Վաճառված հողերի քանակի 43.0% կամ 2341 գործարքներ /1669.49 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 75 գործարքներ /22.84 հա/, իսկ 56.7% կամ 3081 միավորը /3607.14 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 184 միավոր /14.95 հա/: 2008թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 16 գործարք /9.22 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքներ:

Ստորև ներկայացվում է 2008թ. երրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

ՄԱՐԶԻ ԱՎԱՆՈՒՄԸ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	4	1.20	21	2.21	50	19.43	11	2.29	2	0.13	139	10.17	32	2.36
Արագածոտն	167	556.89	1	1.01	21	2.39	81	3.83	171	330.42	0	0.00	172	15.52	13	1.53
Արարատ	92	184.39	23	13.66	176	16.07	120	4.37	202	128.36	3	0.61	225	19.26	21	0.59
Արմավիր	62	180.51	5	0.84	4	0.61	92	3.42	328	2500.81	0	0.00	268	25.62	27	0.99
Գեղարքունիք	18	56.77	5	2.92	60	8.10	37	3.75	61	69.07	1	0.01	44	5.12	10	2.84
Լոռի	16	20.45	3	12.57	48	3.71	89	2.08	82	67.80	0	0.00	27	1.92	26	1.24
Կոտայք	215	378.05	4	0.73	228	12.31	194	13.11	409	223.30	0	0.00	426	36.29	50	4.95
Շիրակ	12	11.07	5	3.08	109	3.50	83	2.39	41	68.86	1	0.13	26	2.57	16	0.79
Սյունիք	4	9.29	0	0.00	11	1.30	15	0.61	38	26.08	2	0.40	12	0.88	5	0.30
Վայոց Ձոր	26	54.24	1	0.03	67	4.76	74	2.01	22	11.58	0	0.00	35	3.19	9	2.26
Տավուշ	28	34.35	6	1.50	21	1.18	29	2.51	50	17.73	0	0.00	37	3.10	6	3.02
Ընդամենը	640	1486.01	57	37.54	766	56.14	864	57.51	1415	3446.30	9	1.28	1411	123.64	215	20.87

Ստորև ներկայացվում է 2008թ. երրորդ եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	54	14.89	4	1.20	13	0.50	37	13.19	21	7.96	0	0.00	0	0.00	8	1.71	13	6.25
Արագածոտն	8	0.08	0	0.00	1	0.04	7	0.04	262	564.04	167	556.89	1	1.01	20	2.35	74	3.79
Արարատ	30	2.47	5	1.11	5	0.20	20	1.16	381	216.02	92	184.39	18	12.55	171	15.87	100	3.21
Արմավիր	17	0.13	1	0.03	0	0.00	16	0.10	146	185.26	62	180.51	4	0.81	4	0.61	76	3.33
Գեղարքունիք	6	0.57	0	0.00	2	0.37	4	0.20	114	70.95	18	56.76	5	2.91	58	7.73	33	3.55
Լոռի	27	0.39	0	0.00	6	0.21	21	0.18	129	38.42	16	20.45	3	12.57	42	3.50	68	1.90
Կոտայք	36	2.73	1	0.05	4	0.26	31	2.42	599	400.90	209	377.48	3	0.68	224	12.05	163	10.69
Շիրակ	36	2.32	1	1.20	20	0.68	15	0.44	173	17.71	12	11.07	4	1.88	89	2.82	68	1.94
Սյունիք	1	0.002	0	0.00	0	0.00	1	0.002	29	11.20	4	9.29	0	0.00	11	1.30	14	0.61
Վայոց Ձոր	7	1.19	0	0.00	0	0.00	7	1.19	161	59.84	26	54.24	1	0.03	67	4.76	67	0.81
Տավուշ	13	0.48	0	0.00	7	0.25	6	0.23	71	39.07	28	34.35	6	1.50	14	0.93	23	2.29
Ընդամենը	235	25.25	12	3.59	58	2.51	165	19.15	2086	1611.37	634	1485.43	45	33.94	708	53.63	699	38.37

Հանրապետությունում 2008թ. երրորդ եռամսյակում արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 6 գործարքներ /0.57 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2008թ. երրորդ եռամսյակում, 2007թ. երրորդ եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 8.0%-ով: Ընդ որում Երևանում նվազել է 52.3%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 9.4%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 12.2%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել՝ 59.1%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել՝ 1.3%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել՝ 28.6%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. երրորդ եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	128	279.75	34.4	1987.0	225.6	117	60.49	365.0	12000.0	3511.4
Ապարան						16	6.66	86.5	2727.3	452.5
Թալին	39	277.13	32.0	143.7	48.6	33	254.99	93.6	5494.5	479.2
Ծաղկահովիտ						5	8.29	79.5	1000.0	202.8
Արարատի մարզ										
Արտաշատ	25	67.17	21.2	602.2	238.9	76	52.30	335.1	10833.3	1849.8
Մասիս	61	110.58	29.7	2904.0	489.8	72	48.50	200.0	11904.8	2350.0
Վեդի	6	6.64	40.0	108.3	77.1	51	26.34	207.0	10795.1	1616.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	22	53.33	30.5	1864.9	318.5	103	169.84	294.3	9090.0	1133.7
Բաղրամյան	25	117.62	34.3	622.1	76.6	56	2213.54	90.6	2561.1	659.4
Վաղարշապատ	15	9.55	31.6	1009.0	688.1	167	116.01	444.4	11764.7	2104.3
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						10	1.08	199.8	1875.0	419.0
Ճամբարակ	2	5.50	706.0	715.7	710.8	23	19.63	60.5	953.3	187.5
Մարտունի						6	1.76	51.1	2850.0	519.1
Սևան	3	2.49	231.3	831.4	563.2	2	0.29	52.2	2134.8	211.4
Վարդենիս	13	48.78	93.3	454.1	307.8	20	46.31	41.2	2575.1	308.4
Լոռու մարզ										
Այվերդի	1	1.04	446.6	446.6	446.6	15	6.85	170.4	6424.2	1144.0
Գուգարք	8	3.02	90.6	1125.0	607.8	17	9.13	234.6	6065.9	998.9
Սպիտակ						12	4.74	250.0	5555.5	553.0
Ստեփանավան	7	16.39	160.1	1233.2	405.5	27	24.28	90.6	1686.6	409.9
Տաշիր						11	22.79	45.3	1384.4	218.2
Կոտայքի մարզ										
Աբովյան	86	124.07	33.9	1642.9	294.6	186	90.74	279.3	11942.7	4227.1
Եղվարդ	95	214.53	35.3	1384.6	220.5	195	116.36	174.4	11971.8	2963.4
Հրազդան	28	38.88	39.2	747.5	300.8	21	13.89	130.5	10256.4	1208.1

Շիրակի մարզ										
Ախուրյան	10	6.83	105.0	792.0	275.2	11	11.64	252.0	1693.1	485.2
Ամասիա	1	3.00	68.4	68.4	68.4	12	22.80	40.9	261.0	124.7
Անի						3	8.64	110.6	546.9	275.7
Աշոցք	1	1.24	313.0	313.0	313.0	4	5.99	58.5	215.8	120.3
Արթիկ						11	19.80	79.4	1428.6	188.7
Սյունիքի մարզ										
Գորիս	2	2.92	1073.1	1080.0	1076.6	15	8.42	92.6	1023.2	404.7
Կապան	1	0.57	340.7	340.7	340.7	1	0.21	120.0	841.6	254.4
Մեղրի						9	1.55	193.0	3000.0	551.4
Սիսիան	1	5.80	247.2	247.2	247.2	13	15.91	46.3	1977.4	277.3
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	22	42.49	37.1	704.3	183.6	21	11.49	125.0	10000.0	1378.1
Վայք	4	11.76	35.4	240.0	97.9	1	0.09	58.8	1430.7	526.2
Տավուշի մարզ										
Բերդ	11	11.91	161.5	929.5	379.0	14	2.73	213.3	3783.8	414.6
Իջևան	17	22.44	232.5	8800.0	787.0	11	5.12	267.5	9454.5	909.5
Նոյեմբերյան						25	9.88	46.7	7368.4	629.3

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. երրորդ եռամսյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	14	15270.0	174.4	2272.0	874.1	160	136625.0	130.7	22200.0	2571.1
Ապարան						8	10080.0	124.1	609.6	220.1
Թալին	2	3405.0	81.8	121.9	101.9	3	5847.0	63.2	1454.8	110.2
Ծաղկահովիտ	4	4800.0	70.8	70.8	70.8	1	2689.0	60.0	214.3	75.1
Արարատի մարզ										
Արտաշատ	81	90267.0	115.2	820.0	224.0	46	43596.3	173.9	7140.3	926.9
Մասիս	89	67784.0	267.3	1586.8	592.6	141	113390.0	187.5	25000.0	1215.3
Վեդի	1	689.0	191.3	191.3	191.3	37	35271.0	126.1	5000.0	680.1
Արմավիրի մարզ										
Արմավիր	3	4976.0	114.1	276.1	196.1	86	91240.0	131.6	9090.9	1219.1
Բաղրամյան						4	4200.0	100.0	833.3	151.9
Վաղարշապատ	1	1120.0	1914.0	1914.0	1914.0	176	158495.0	197.4	26528.4	1549.2
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	295.0	2762.7	2762.7	2762.7	12	10200.0	186.6	1084.3	391.1
Ճամբարակ						2	2237.0	71.3	2286.2	106.4
Մարտունի	2	816.0	118.4	118.4	118.4	12	15860.0	119.3	5000.0	272.5
Սևան	53	73617.0	188.1	637.3	470.3	13	13115.0	240.0	3110.4	182.2
Վարդենիս	2	2550.0	31.7	378.4	205.1	5	9754.0	72.5	987.2	130.8

Լոռու մարզ										
Արևմտյան						3	750.0	114.3	1388.9	148.9
Գուգարք	27	16642.0	159.6	4976.4	2195.7	16	9708.0	77.9	14083.3	612.0
Մայիտակ						4	4270.0	104.9	1348.3	147.5
Ստեփանավան	15	18364.0	72.7	412.4	216.9	3	3700.0	88.2	1666.7	118.5
Տաշիր						1	773.0	45.3	400.0	70.5
Կոտայքի մարզ										
Արմավյան	205	97308.0	272.0	4998.0	1540.8	201	166505.0	264.5	35353.5	2060.1
Եղվարդ	4	2620.0	1485.3	3234.0	2114.1	191	161036.0	173.6	27000.0	2255.0
Հրազդան	15	20600.0	274.3	3234.0	710.6	33	34519.0	117.7	34848.5	1350.2
Շիրակի մարզ										
Ախուրյան	71	20628.0	70.0	4444.7	1899.3	16	11922.2	113.6	18750.0	332.8
Ամասիա						1	3780.0	45.3	274.7	70.7
Անի						2	2314.0	67.9	180.6	100.2
Աշոցք								40.8	144.0	58.1
Արթիկ	18	7576.0	52.5	2100.0	356.3	6	6280.0	111.8	5000.0	192.6
Սյունիքի մարզ										
Գորիս						6	4570.0	112.2	1700.0	257.2
Կապան	9	12088.0	115.5	166.3	122.0	4	2549.1	67.9	2638.9	215.5
Մեղրի	2	900.0	311.1	311.1	311.1	1	970.0	68.5	632.9	134.1
Սիսիան						1	710.0	123.5	875.0	152.2
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	7	3305.0	751.3	762.5	758.1	17	18438.0	96.7	7659.6	329.1
Վայք	60	44250.0	126.0	1323.0	872.5	16	12650.0	120.7	1448.3	125.6
Տավուշի մարզ										
Բերդ						1	467.0	75.8	810.0	89.2
Իջևան	13	9253.0	158.4	2300.0	1327.2	34	28539.0	74.1	14423.1	471.0
Նոյեմբերյան	1	70.0	446.6	446.6	446.6	2	2020.0	125.0	1948.1	146.4

2008թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 17 գործարքներ 5.62 հա մակերեսով, ընդ որում 6-ական՝ /0.38 հա/ Արագածոտնի, /1.10 հա/ Լոռու, 2-ը՝ /1.00 հա/ Արմավիրի, 1-ական /0.06 հա/ Գեղարքունիքի, /0.07 հա/ Արարատի, /3.01 հա/ Շիրակի մարզերում:

2008թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2817 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.8%: Ընդ որում, վարձակալության գործարքների 47.5% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2008թ. երրորդ եռամսյակում 2008թ. երկրորդ եռամսյակի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 10.9%-ով, իսկ 2007թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել՝ 10.4%-ով:

2008թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 176 բնակարանների, 145 անհատական բնակելի տների, 1064 հասարակական, 172 արտադրական նշանակության օբյեկտների, 1212 միավոր /10647.68 հա/ հողերի և 48 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2008թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 68 վարձակալության գործարքների, այդ թվում 30 միավոր /0.36 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2008թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել է 37.6%-ով, իսկ 2007թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 20.0%-ով:

2008թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալված 10647.68 հա հողերից 17.20 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 10630.49 հա հողերի 51.61 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 1.02 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 4974.35 հա, որից 4924.31 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 2536.30 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2008թ. երրորդ եռամսյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	2	378.00	20	185.72
Արարատ	3	1200.00	64	108.46
Արմավիր	0	0.00	13	276.50
Գեղարքունիք	5	341.30	54	146.13
Լոռի	3	15.00	39	138.00
Կոտայք	1	90.00	32	172.17
Շիրակ	3	430.00	142	464.09
Սյունիք	1	80.00	52	4844.31
Վայոց Ձոր	3	2.00	27	1487.25
Տավուշ	0	0.00	6	13.32
Ընդամենը	21	2536.30	449	7835.95

2008թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 7288 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 17.7%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2008թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել է 6.9%-ով, իսկ 2007թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել՝ 3.9%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /47.0%/, առանձնատների /27.6%/, հասարակական նշանակության օբյեկտների /9.6%/ և հողերի /12.0%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2867 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2008թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել է 9.5%-ով, իսկ 2007թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել՝ 1.1%-ով:

2008թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 618 գործարքներ, որից 414-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 71.5%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 19.4%-ը՝ անհատական բնակելի տների, 4.0%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների, 0.5%-ը՝ արտադրական նշանակության օբյեկտների, 1.8%-ը՝ այգետնակների, 0.5%-ը՝ ավտոտնակների և 2.3%-ը՝ հողերի նկատմամբ: Գործարքների քանակը 2008թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել է 31.6%-ով, ընդ որում Երևանում՝ 28.5%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 37.2%-ով:

2008թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 1043.94 հա հողեր, որից 16.18 հա՝ Երևանում: Ընդ որում, հողերի 89.2%-ը, կամ 931.31 հա, գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 1.05 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արագածոտնի մարզում՝ 387.50 հա, որից 383.06 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2008թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 11 և 14 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2008թ. երկրորդ եռամսյակի համեմատ մասնավորեցման գործարքների քանակն աճել է 4.2%-ով, իսկ 2007թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 24.2%-ով: 2008թ. երրորդ եռամսյակում մասնավորեցման գործարքների բարձր տոկոսաչափն արձանագրվել է Արմավիրի մարզում՝ 24.0%, իսկ ցածրը՝ 4.0-ական%, Տավուշի և Սյունիքի մարզերում:

2008թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 6864 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2008թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել է 0.8%-ով, իսկ 2007թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 1.6%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.7%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /27.6%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն